

**ԵՊՀ առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոց, պատմության և հասարակագիտության
ուսուցիչ Ա. Եղիազարյան
Դասի պլան**

**Սովորողներին ներկայացվող պահանջները
զիտելիքներ, հմտություններ կարողություններ**

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

Ա մակարդակ

Իմանա՝

ըստ միջազգային իրավունքի ցեղասպանությունը հանցագործություն է և որ հանցագործները պետք է պատժվեն:

Բ մակարդակ

Կարողանա՝

բացատրել՝ ցեղասպանություն՝ եզրույթը, օգտվելով սկզբնաղբյուրներից և այլտեղեկատվությունից, այդ թվում՝ համացանցային

Գ մակարդակ

Իմանա՝

վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից չի կիրառվում ցեղասպանության հանցագործության նկատմամբ:

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման

Ինչ է ցեղասպանությունը

Դասի նպատակը և խնդիրները

ՖՐԱՆՍԻԱՅԻ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

1915 թվական, մայիսի 15

Սովորողները կիմանան՝

- Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի 1915 թ մայիսի 15-ի համատեղ հռչակագիրը հայոց ցեղասպանության առաջին նախնական բնութագրումն ու ճանաչումն է:
- երկրորդ աշխարհամարտից հետո ցեղասպանություն երևույթի իրավական ընդհանուր բնութագրի մասին:
- Պատկերացում կունենան այն մասին, որ
- ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է:
- միջազգային իրավունքով նախատեսվում է ցեղասպանություն հանցագործություն կատարողների և հանցակիցներ անխուսափելի պատիժ:

**ԵՊՀ առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոց, պատմության և հասարակագիտության
ուսուցիչ Ա. Եղիազարյան**

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս՝ սովորողների հաշվառում (առավելագույնը՝ 2 թույլե)

Խթանում (5-8 թույլե)

Դասի սկզբում կկիրառվի Մտագրոհ՝ մեթոդը, որով կխթանվի սովորողների ստեղծագործականությունը մտքերն ազատ, անկաշկանդ արտահայտելու Ինչ է ցեղասպանությունը հարցի պատասխանները որոնելու նպատակով:

Սովորողներին կհայտնեն խնդիրը՝ Ինչ է ցեղասպանությունը, որ պետք է նրանք լուծեն, առաջարկելով ներկայացնել սեփական գաղափարները, որոնք գրատախտակին կամ ֆլիպ չարտի վրա կգրանցեմ ըստ սովորողների արտահայտվելու հերթականության, այնպես, ինչպես իրենք են ձևակերպում: Մտքերի տարափի ավարտից հետո սովորողների հետ կքննարկեմ և կարժևորեմ առաջարկված գաղափարները, խմբավորելով, վերլուծելով, զարգացնելով դասարանի կողմից: Արդյունքում կառանձնացնենք այն գաղափարը (գաղափարները), որ մեր կարծիքով նպաստավոր են ցեղասպանություն հասկացությունը բացատրելու համար: Դասարաններում սովորողների թվի հետ կապված խմբերում կարող են ներգրավվել առավելագույնը 4 հոգի կամ կձևավորվեն նույն առաջադրանքը ունեցող հավելյալ մեկ, երկու խմբեր:

Հիմնական մաս

Իմաստի ընկալում (20 թույլե)

Այս փուլում օգտագործում ենք 1, 2, 3, 4 բաշխման նյութերը, (կարող ենք օգտագործել նաև 9-րդ դասարանի հայոց պատմության դասագիրքը կամ դասագրքի վիրտուալ/էլեկտրոնային տարբերակը): Խմբերում համապատասխանաբար կընթերցվեն բաշխման նյութերը, խմբի սովորողներից մեկը, երկուսը կամ հերթականությամբ բոլորը կներկայացնեն բաշխման համապատասխան նյութերի բովանդակությունը, մյուսները հարցեր կտան ներկայացնող(ներ)ին, կքննարկեն, աշխատանքային տեսքում կամ համակարգչում դուրս կգրեն կարևոր անունները, տերմինները, թվականները, իրադարձությունները: Խմբերը հաջորդաբար, գործընթացի կրկնությամբ կսովորեն և կսովորեցնեն բաշխման բոլոր նյութեր բովանդակությունը: հատվածները: Տնային և հետազոտական խմբային աշխատանքների ավարտից հետո յուրաքանչյուր խմբից մեկ սովորող դասարանին կներկայացնի իր սովորած ամբողջական բովանդակությունը: Հարկ եղած դեպքում ներկայացնողին կօգնեմ, ներդրում կատարելով նրա պատասխանում, կառաջարկեմ սովորողներին հարցեր տալ, ինքս հարցադրումներ կուղղեմ ներկայացնողին:

**ԵՊՀ առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոց, պատմության և հասարակագիտության
ուսուցիչ Ա. Եղիազարյան**

Կշռադատման փուլ(10 թույլե)

Այս փուլում սովորողները սովորական կամ էլեկտրոնային գրատախտակի վրա և իրենց համակարգիչներում կամ տետրերում կլրացնեն աղյուսակը, հնարավոր է սովորողների ձեռք բերած հավելյալ տեղեկատվության օգտագործում:

№	Տարեթիվ	Կազմակերպություն	Ընդունված փաստաթուղթ	Փաստաթղթի քննարկվող բովանդակություն	Հավելյալ տեղեկություն, իրադարձություններ

Անդրադարձին հատկացվող մոտ հինգ թույլե ամփոփիչ հարցադրումներով ենք անցկացնում, հանձնարարվում է տնային աշխատանք^a համառոտ շարադրություն:

Նոր նյութի հաղորդման այս դասի ընթացքում կիրառում եմ փոխադարձ ուսուցման, ցուցադրման, բանավոր շարադրանքի, քարտեզով աշխատանքի, գործնական աշխատանքի մեթոդներ և հնարներ:

Միջառարկայական և ներառկայական կապեր ենք հաստատում համաշխարհային պատմության, աշխարհագրության, գրականության հետ:

Օգտագործվող ուսումնական նյութերն են Հայոց պատմության դասագիրքը, բաշխման նյութերը, աշխատանքային տետրը, համացանցային տեղեկատվությունը:

Հնարավորության դեպքում օգտագործում ենք համակարգիչ, տեսասարք, էլեկտրոնային գրատախտակ: